ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Չեխիայի Հանրապետություն (Պրահա) գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը.**
   Տաթևիկ Ստեփանյան

2. **Զբաղեցրած պաշտոնը.**
   ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**
   Չեխիայի Հանրապետություն (Պրահա), 2024 թվականի հոկտեմբերի 3-ից 5-ը

4. **Հրավիրող կողմը.**
   Բժշկական գնահատողների Եվրոպական միության անդամ պետությունների ասոցիացիա (EUMASS)

5. **Գործուղման նպատակը.**
   Մասնակցություն Բժշկական գնահատողների Եվրոպական միության անդամ պետությունների հանդիպման շրջանակներում կազմակերպված մասնագիտական գիտական սիմպոզիումին

6. **Քննարկված թեմաները.**

- Բժշկական ապահովագրության թվայնացման առավելությունները. անաշխատունակության համակարգի թվայնացման նախագծի ներկայացում
- Սոցիալական ապահովության և բժշկական գնահատման ծառայության թվայնացում, միջազգային փորձ
- Առողջության գնահատման ինստիտուտի ստեղծում
- Հարբժշկական մասնագետների պատրաստում, աշխատանք և փորձ
- Չեխիայի բժշկական գնահատման համակարգը
- Առողջապահական և սոցիալական տվյալների կապը

- Հաշմանդամություն ունեցող անձանց գնահատման համակարգի ռեֆորմի ներկայացում, e-Disability գնահատման գործիքի ներկայացում

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

- Իվա Մերհաուտովա, Չեխիայի աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Սոցիալական ապահովագրական և ոչ ապահովագրական ծառայությունների բաժնի գլխավոր տնօրեն
- Ֆրանտիշեկ Բոհաչեկ, Չեխիայի սոցիալական ապահովության վարչության գլխավոր տնօրեն
- Կարոլինա Ռումլովա, Առողջության գնահատման ինստիտուտի տնօրեն, Յանա Վենցլովա, Առողջության գնահատման ինստիտուտի Բժշկական գնահատման ծառայության մեթոդաբանության և բողոքարկման բաժնի տնօրեն
- Լյուդմիլա Շուլկովա-Հեյնալովա, Առողջության գնահատման ինստիտուտի Բժշկական գնահատման ծառայության և մեթոդաբանության կրթության բաժնի տնօրեն
- Յան Բոհաչ, Առողջապահության ոլորտում հետբուհական կրթության ինստիտուտի Բժշկական գնահատման ամբիոնի վարիչ
- Մարտինա Շտեպանկովա, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Եվրոպական հիմնադրամների և միջազգային համագործակցության հարցերը համակարգող փոխնախարար
- Հանդիպում Չեխիայի աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ներկայացուցիչների հետ.
  - Էմիլի Կալովա, Սոցիալական ծառայությունների, երեխաների սոցիալական պաշտպանության և սոցիալական աշխատանքի ոլորտում տեսչական ստուգումների, հավատարմագրման, ֆինանսավորման վարչության տնօրեն
  - Շտեֆան Լուկաչ, Սոցիալական ծառայությունների և պլանավորման բաժնի ղեկավար, Սոցիալական ծառայությունների և սոցիալական աշխատանքի հայեցակարգի վարչություն
  - Մարկետա Կատերինա Հոլեչկովա, սոցիալական ծառայությունների և պլանավորման վարչություն, սոցիալական ծառայությունների և սոցիալական աշխատանքի բաժին
  - Էվա Նեմեչկովա, Միջազգային համագործակցության բաժին, ԵՄ և միջազգային վարչություն
- Էրիկ Սիպերա, Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ծառայություններ մատուցող չեխական ՀԿ-ների աջակցության տնօրեն

- Մարտին Սիմաչեկ, Չեխիայի սոցիալական ներառման գործակալության տնօրեն (տարածաշրջանային զարգացման նախարարության գործակալություն)
- Մարտինա Զիկմունդովա, «Փողոցային աշխատանք» չեխական հասարակական կազմակերպության տնօրեն

Սիմպոզիումին, որին ներկա էին տարբեր երկրներ ներկայացնող շուրջ 80 փորձագետ, հանդես եմ եկել ելույթով, ներկայացրել եմ հաշմանդամություն ունեցող անձանց հիմնահարցերի ոլորտում Հայաստանի Հանրապետության կողմից իրականացվող քաղաքականությունների շրջանակը, ապա խոսել իրականացված և նախատեսվող բարեփոխումների մասին: Մանրամասնել եմ նաև հաշմանդամության գնահատման նոր մոդելի փոփոխության տեսությունը, անդրադարձել հաշմանդամության գնահատման ինստիտուցիոնալ շրջանակին, անձի ֆունկցիոնալության գնահատման իրականացման փուլերին՝ խոսելով նաև հաշմանդամություն ունեցող անձանց ուղղված ծրագրերի, վերջիններիս տրամադրվող ծառայությունների շրջանակի և երաշխիքների մասին:
Պրահա այցի ընթացքում ինձ ուղեկցում էր «Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամի գործադիր տնօրեն, ով ներկայացրեց սոցիալական պաշտպանության ոլորտի թվային փոխակերպման շրջանակում անձի ֆունկցիոնալության գնահատման e-disability համակարգը, դիմումների մշակման համակարգի թվային լուծումները, կանխատեսող սկզբունքով ալգորիթմային լուծումները, ներառական և ինտուիտիվ գործիքակազմը:

Հարկ է նշել, որ առաջին անգամ սիմպոզիումի շրջանակում հայկական կողմը թվային ոլորտում արտադրանք ներկայացնելու բացառիկ հրավեր էր ստացել, ինչը նոր նշաձող է սոցիալական պաշտպանության ոլորտի թվային փոխակերպման գործընթացում: Արդյունքում՝ SocialGovTech արտադրանքը միջազգային հարթակում ներկայացվել է որպես որակյալ, հարմարավետ, մարդակենտրոն և ինովատիվ արտադրանք:
Սա երկրորդ պաշտոնական այցն է, որը կազմակերպվում է «Մարդը կարիքի մեջ» չեխական հասարակական կազմակերպության և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սերտ համագործակցությամբ: Հանդիպումներ են տեղի ունեցել Չեխիայի աշխատանքի և սոցիալական հարցերի և Չեխիայի տարածքային զարգացման նախարարությունների ներկայացուցիչների հետ, որի ընթացքում քննարկվել են սոցիալական ծառայությունների պատվիրակման, ինչպես նաև ֆինանսավորման և վերահսկման մեխանիզմները, միաժամանակ հանդիպումներ են տեղի ունեցել

սոցիալական ծառայություններ մատուցող տեղական ՔՀԿ-ների հետ, որի ընթացքում քննարկվել են պետության կողմից ՔՀԿ-ներին տրամադրվող ֆինանսական միջոցները և դրանց համապատասխանությունը գոյություն ունեցող կարիքներին, ծառայությունների մատուցման ընթացքում հանդիպող դժվարությունները, հաղթահարման մեխանիզմները, շահառուների հետ հետադարձ կապի կարևորությունը, ինչպես նաև երկկողմ համագործակցության արդյունավետ ուղիներն ու հնարավորությունները:

Միջոցառմանը մասնակցել են նաև «Մարդը կարիքի մեջ» Հայաստանի Հանրապետությունում գործող ՀԿ-ի ներկայացուցիչ Քրիստինա Հովհաննիսյանը և «Մարդը կարիքի մեջ» Չեխիայում գործող ՀԿ-ի ներկայացուցիչ Պավլա Ստեֆանովան:

Պրահա այցի շրջանակներում Չեխիայի աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակիցները ներկայացրել են սոցիալական ծառայությունների հավաստագրման կարգը, դրանց վերահսկման գործիքակազմերը:

8. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**
Գիտաժողովը չէր նախատեսում որևէ փաստաթղթի ընդունում կամ ստորագրում, սակայն չեխական կողմը հետաքրքրություն ցուցաբերեց Հայաստանի Հանրապետություն ժամանելու հարցում՝ տեղում ծանոթանալու ռեֆորմին, գնահատման գործիքակազմին և առհասարակ՝ սոցիալական պաշտպանության ոլորտում վերջին տարիներին ստեղծված թվային գործիքներին:

9. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.**
Առաջարկում եմ ՀՀ արտաքին գործերի նախարարության միջոցով հրավիրել չեխական կողմին Հայաստանի Հանրապետություն՝ տեղում փորձը ներկայացնելու նպատակով:

Պայմանավորվածություն է ձեռք բերվել առ այն, որ ՀՀ ԱԳՆ կդիմի չեխական կողմին՝ ծառայությունների հավաստագրման, դրանց չափորոշիչների,

գնահատման, վերահսկման մեխանիզմների գործիքակազմերը ստանալու խնդրանքով:

10/9/2024

X

ՏԱԹԵՎԻԿ ՍՏԵՓԱՆՅԱՆ

10. Ստորագրությունը, ամսաթիվը: Signed by: STEPANYAN TATEVIK 6205820293